«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

Դերային Խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Առաքելյան Աննա

Մանկապարտեզ՝ « 101 » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն …….....3

Տեսական մաս.....5

Հեղինակների մեջբերումներ.....9

Գլուխ Առաջին.....10

Գլուխ Երկրորդ.....11

Օրինակելի Պարապմունք.....13

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականություն.....16

Ներածություն

Ժամանակն առաջ է ընթանում և կյանքում փոփոխվում է ամեն բան, ամեն ուր՝ և ընտանիքում, և մանկապարտեզում փոփոխվում են պայմանները,փոփոխվում են նաև ուսումնական աշխատանքի կազմակերպման եղանակները: Ուսումնական աշխատանքը պետք է խաղի հետ միահյուսված լինի,որ հեշտ ու հասկանալի դառնա երեխաների համար: Նախադպրոցական տարիքը շատ կարևոր ժամանակահատված է երեխաների համար:Այդ ժամանակ հիմք են դրվում անձի զարգացման ուղիները, կամքը և վարքի դրսևորումները, ակտիվորեն զարգանում է երևակայությունը, ստեղծագործելու ունակությունը: Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է: Խաղի ժամանակ երեխան առաջին անգամ տևականորեն շբվում է իր հասակակիցների հետ նրանց միացնում է ընդհանուր նպատակը: Դրան հասնելու միասնական ջանքերը,հետքրքրություններն ու արարքները: Միառժամանակ նա փորձում է կատարել մեծի դեր՝հասկանալով հանդերձ, որ ինքը դեռ մեծ չէ: Եվ արդյունքում երեխայի մեջ ձևավորվում է չափահաս դառնալու, հասարակայնորեն արժեքվոր դեր կատարելու ձգտում: Քիչ խաղացով երեխան Լ. Ս. Վիգոտսկու կարծիքով կորցնում է զարգացման բազում հնարավորություններ: Անկախ, ազատ գործող երեխան լիարժեք օգտագործում է իր բոլոր հմտություններն ու ունեցած տեղեկատվությունը: Միարժամանակ դրանք փոողանցում է ընկեներին և յուրացնում նրանցը: Այդ ընթացքում նա կենցաղային, սոցիալական և հոգեբանական խնդիրներ է լուծում: Լ. Ս Վիգոտսկու, Լ. Ս. Ռուբինշտեյնի, Դ. Բ. Էլկոնինի , Լ.Ս Բոժովիչի, Ն. Պ Անիկեևյանի խաղի հոգեբանությանը նվիրված ուսումնասիրություններում, այն դիտարկվում է որպես երեխայի՝

- Շրջապատող աշխարհի նկատմամբ հատուկ վերաբերմունք :
- Հատուկ գործունեություն, որը փոփոխվում և զարգանում է որպես նրա սուբյեկտիվ գործունեություն:

- Հասարակայնորեն առաջարկված և նրա կողմից յուրացված գործունեության տեսակ:
- <Մանկական հանրության> կազմակերպման սոցիալ-մանկավարժական ձև:
- Գործունեություն, որի ընթացքում տեղի է ունենում հոգեկանի զարգացում

Տեսական մաս

Խաղը ունի բացառիկ նշանակություն, քանի որ այն և՛ ուսում է, և՛ աշխատանք, և՛ դաստիարակության լուրջ միջոց: Ընդօրինակող ինքնուրույն խաղը օգնում է երեխաներին յուրացնել ստացած տպավորությունները, խորացնում է գիտելիքները: Խաղը դիտում են որպես երեխաների ինքնուրույն ստեղծագործական գործունեություն: Խաղերը չպետք է շաբլոնացվեն, այլ պետք է ապահովեն երեխայի ձեռներեցությունը, ազատությունը, որ նա ինքը հնարի խաղեր, իր առջև դնի նպատակներ: Մեծահասակները չպետք է սահմանափակեն երեխաների մտահղացումները:
Խաղի էական, կարևոր նշանակությունն այն է, որ երեխան կանգնում է ուրիշ մարդու դիրքերի վրա, նայելով աշխարհին մեծահասակի տեսանկյունից, որի դերը նա կատարում է: Խաղը նպաստում է երեխաների բազմակողմանի մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակությանը:

Երեխաների խաղը աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով: Նրանցից հիմնականը այն է, որ խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի՝ մեծերի գործողությունների, նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է, ընդ որում, այնպիսի պայմաններում, որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ: Օրինակ՝ խմբասենյակը կարող է դառնալ անտառ, խանութ, հիվանդանոց ևն.:
Խաղի առանձնահատկություններից է նաև այն, որ երեխան հավատում է իր հորինված խաղի բովանդակությանը: Օրինակ՝ նա վարում է մեքենան, վիրահատում է հիվանդին ևն.:
Հաջորդ առանձնահատկությունը խաղի ինքնագործ բնույթն է: Երեխաները իրենք են ստեղծում խաղերը, որտեղ դրսևորվում են նրանց գիտելիքները կյանքի երևույթների և իրադրությունների մասին, ինչպես նաև երեխաների վերաբերմունքը նրանց նկատմամբ:
Կարևոր առանձնահատկություն է այն, որ խաղային գործունեությունը, կերպարը և խոսքը հանդես են գալիս միասնական: Երեխան խաղում է անմիջական և անկեղծ: Նա ապրում է իր հերոսի գործողություններով և հույզերով:

Հաջորդ առանձնահատկությունը խոսքային շփումն է: Երեխաները արտահայտում են իրենց մտքերը, ապրումները, հաղորդակցվում են միմյանց հետ, ճշտում և լրացնում խաղի բովանդակությունը:

Խաղերը իրենց բովանդակությամբ և բնորոշ առանձնահատկություններով տարբերվում են: Խաղերի տեսակներից են.

1. Սյուժետադերային խաղերը, որոնք երեխաները իրենք են ստեղծում դաստիարակի որոշ ղեկավարությամբ: Այս խաղերը ստեղծագործական, սյուժետադերային խաղեր են, քանի որ այստեղ երեխաները ոչ միայն ընդօրինակում և վերարտադրում են այս կամ այն երևույթը, այլ ստեղծագործաբար գիտակցում այն և վերարտադրում խաղային գործողություններում:
2. Կանոններով խաղեր: Այս խաղերը երեխաների համար ստեղծում են մեծերը և ունեն որոշակի կանոններ: Այս խաղերից են դիդակտիկ խաղերը, շարժախաղերը և խաղ-զվարճալիքները:

Մեծերի հետ համատեղ կյանքով ապրելու երեխաների ձգտումը միայն համատեղ աշխատանք կատարելու հիման վրա բավարարվել չի կարող: Այդ պահանջմունքները երեխան բավարարում է խաղի ընթացքում և իր վրա է վերցնում մեծահասակի դերը, այսինքն, դերային խաղ է խաղում, որը մեծահասակի կյանքին հաղորդակից լինելու յուրահատուկ ձև է: Օրինակ, երբ երեխան գնորդի դեր է կատարում, սկսում է հասկանալ, որ իրավունք ունի ուշադրությամբ զննելու ապրանքը, նկատողություն անելու սպասարկման վերաբերյալ, բայց խանութից հեռանալիս պարտավոր է վճարել գնված ապրանքի համար: Երեխան սովորում է կարգապահ լինել, համաձայնեցնել իր գործողությունները մյուս անդամների հետ, այսինքն, խաղի միջոցով ձևավորվում է երեխայի ինքնագիտակցությունը:
Խաղի ընթացքում երեխան հեշտությամբ հասկանում է, որ իրական առարկան կարող է փոխարինել խաղալիքով կամ պատահական իրով: Այսպես օրինակ սովորական մատիտը կարող է կրակել, քարը կարող է դառնալ որևէ կենդանի, տերևը՝ թղթադրամ ևն.: Դերային

խաղը նպաստում է խոսքի զարգացմանը, քանի որ այն պահանջում է հաղորդակցության մեջ մտնել ընկերների և մեծահասակների հետ։
Խաղը լուրջ ազդեցություն է ունենում երևակայության զարգացման գործում։ Դերային խաղը ծնվում է երեխայի հետաքրքրություններից, դերային խաղերում երեխան ազատ է, միտքը ճկուն է, որովհետև բացակայում են երեխային կաշկանդող թելադրանքն ու հսկողությունը։
Դերային խաղերը հիմնականում կոլեկտիվ խաղեր են, այստեղ մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը։ Այս խաղերը կրում են ընդօրինակող բնույթ, օրինակ երեխաները ընդօրինակում են դաստիարակին, մայրիկին, հարևանին, վաճառողին և իրենց շրջապատող մեծահասակներին։
Խաղի զարգացման հարցում մեծ դեր են կատարում խաղալիքները, որոնք արտահայտման անհրաժեշտ միջոցներ են։ Նրանց առկայությունը հարստացնում և խորացնում է խաղի բովանդակությունը։ Խաղի ժամանակ բացահայտվում են յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները՝ հետաքրքրությունները, բնավորության դրական հատկությունները, այսինքն այս խաղերը շատ լավ միջոց են ճանաչելու երեխաների ներքին աշխարհը

Սյուժետադերային խաղերը, որոնք երեխաները իրենք են ստեղծում դաստիարակի որոշ ղեկավարությամբ։ Այս խաղերը ստեղծագործական սյուժետադերային խաղեր են, քանի որ այստեղ երեխաները ոչ միայն ընդօրինակում և վերարտադրում են այս կամ այն երևույթը, այլ ստեղծագործաբար գիտակցում այն և վերարտադրում խաղային գործողություններում։

1. **Ճանաչողական փուլ** (կյանքի առաջին տարին)։ Երեխան ճանաչում է առարկան խաղային գործունեության ընթացքում։ Նա յուրացնում է առարկայի խաղային նշանակությունը, գործողության ձևերը՝ (քնել,ուտել)և կարող է կատարել առանձին գործողություններ։ Այս տարիքի երեխաներին բնորոշ են միևնույն գործողությունների բազմակի կրկնությունը
2. **Արտացոլման փուլ** (կյանքի երկրորդ տարին)։ Երեխան անցում է կատարում առանձին գործողություններից դեպի պրակտիկ իմաստավորված դերային

գործողություններ: Իր գործողությունները մեկ առարկայից տեղափոխում է մյուսին: Այսինքն՝ քնեցնում է ոչ միայն տիկնիկին այլև արջուկին, փիսիկին:
Առաջին անգամ տեղի է ունենում մեկ առարկայի փոխարինումը մյուսով՝ փայտիկը դառնում է գդալ:

3. **Սցենարի վերարտադրման փուլ** (կյանքի երրորդ տարին) : Երեխաները սկսում են գործել որոշակի անձի անունից: Սակայն, իր վրա վերցնելով որոշակի դեր երեխան չի հայտնում դրա մասին նրա գործողությունները դառնում են ավելի տրամաբանական, նա ակտիվորեն օգտագործում են առարկափոխարինիչները:
4. (կյանքի չորրորդ տարին): Երեխան սկսում է անվանել իր դերը՝<< ես մայրիկ եմ>> ,<< ես վարորդ եմ >>: Այս փուլում երեխաները արդեն խաղում են համատեղ և փոխգործակցելով, նրանք կարողանում են պայմանավորվել դերաբաժանում անել:

5. **Սցենարի համատեղ մշակմամբ խաղերի փուլ** (5 տարեկան): Երեխաները կարողանում են կառուցել գործողությունների հաջորդականությունը, վերարտադրում են ոչ միայն մարդկային հարաբերությունները, այլև սոցիալական վարքի կանոնները: Երեխաները ակտիվորեն օգտագործում են մասնագիտական բառապաշարը, զարգանում է երևակայությունը, խաղերն ավելի բամասյուժետ և երկարատև են դառնում :

Հեղինակների մեջբերումներ

Մ.Գորկի – << *Խաղը երեխայի համար իսկական ճանապարհ է դեպի աշխարհի իմացությունը, որի մեջ ապրում են նրանք և որ կոչված են բարեփոխելը* >> :

Լ.Ս.Վիգոտսկի – << *Քիչ խաղացող երեխան կորցնում է զարգացման բազում հնարավորություններ* >> :
<< *Եթե նախադպրոցական տարիքում չզարգանային այնպիսի կարիքներ ինչպիսիք հնարավոր չլիներ անմիջապես իրագործել ապա խաղը գոյություն չեր ունենա* >> :

Վ.Ա.Սուխոմլինսկի – << *Խաղը կայծ է, որ հարցասիրության և հետաքրքրության կրրակ է վառում* >> :

Կ.Ուշինսկի - << *Խաղը թույլ է տալիս տեսնելու և ճանաչելու երեխայի հոգին, այն նպաստում է նրանց դաստիարակությանն և զարգացմանը* >>

Գլուխ Առաջին

Ըստ Պիաժեի՝ 3-6 տարեկանների երեխաների միջավայրում գերակշռում է սոցիալ - դրամատիկ խաղը: 3 տարեկանում ինքնապատկերացումների, հիմնական խնամակալների պատկերացումների և դրանց միջոցով հաղորդվող հուզական իմաստների միաձուլում:Խաղի ժամանակ երեխաները սովորաբար վերարտադրում են այն, ինչ տեսնում են շրջապատում կամ հետաքրքրում է իրենց: Դաստիարակը հոգ է տանում, որ խաղերը լինեն հետաքրքիր, բազմաբնույթ և երեխաների համար օգտակար:

Կան խաղեր, որոնց մեջ փոքրիկներն առանձնակի հաճույքով են խաղում: Դրանցից են, օրինակ՝ /Մանկապարտեզ/, /Երթուղային կայարան/, Բժիշկ-բժիշկ/, /Ընտանիք/ և նմանատիպ այլ խաղեր: Նրանք մեծ սիրով ուսումնասիրում են մեծերի աշխատանքը և փորձում նմանվել նրանց: Նման խաղերը երեխաների մեջ ձևավորում են հարգանք մեծերի աշխատանքի հանդեպ, լավ աշխատելու, նրանց նմանվելու ցանկություն և աշխատասիրություն:Հայտնի է, որ երեխաները շատ են սիրում հեքիաթներ, պատմվածքներ: Նրանք բազմիցս կարող են լսել նույն հեքիաթը, անգիր հիշել և հաճախակի խաղալ կամ բեմականացնել: Նմանատիպ խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, հետաքրքրությունը սիրված հեքիաթների, պատմվածքների նկատմամբ: Մեծահասակը պետք է պարբերաբար և հետևողականորեն հետևի և հոգ տանի, որ երեխաներն ընդօրինակեն միայն լավը: Միջին նախադպրոցականների խոսքի զարգացման գործում դերային խաղերի դերը բացառիկ է,քանի որ դրանք առաջին հերթին նպաստում են կապակցված խոսքի զարգացմանը, երեխաների միջև երկխոսությունը խրախուսելուն, խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում հաղորդակցական հմտությունները գործնականում երեխաների համատեղ գործունեության ընթացքում(ինտերակտիվ խաղային) զարգացնելու, քերականական անսխալ խոսք կազմելուն: Ստորև նշված պարապմունքս անցկացրել եմ Խ.Ի.Կ. համակարգով, որը աշխատելու արդյունավետ տարբերակ է :

Գլուխ Երկրորդ

Խաղը նպաստում է երեխաների սեռադերային փորձի ձեռքբերմանը: Խաղի ընթացքում արժևորվում են վարքի ձևերը, որոնք բնութագրական են ինչպես տղաներին, այնպես էլ աղջիկներին:

Սեռադերային դաստիարակության ամբողջական գործընթացն իրենից ներկայացնում է որոշակի տրամաբանությամբ կառուցված համակարգ: Խոսքը վերաբերում է երեխաների սիստեմատիկ և նպատակաուղղված դաստիարակությանը:

Երեխային շատ են անհրաժեշտ դերային խաղերը, դրանք նրան օգնում են նախապատրաստվել կյանքին ու հասարակությանը: Գործողությունների կրկնումը մեծերի ետևից և սյուժետների խաղարկումը կարող են թվալ չհղկված: Երեխան կարող է պահել իրեն գոռոզ, միամիտ, ակտիվ կամ պասիվ: Խաղարկելով իրադարձությունները մեծերը կանխատեսում են այս կամ այն իրադարձությունների գործողությունների կարգը՝ բերելով նրան կարգապահության: Խաղային գործունեության հիմքում ընկած են ինքնաճանաչման արժևորումը տղաների և աղջիկների կողմից, ժառանգական սովորույթների և սեռադերային վարքագծի սոցիալականացումը և օժտվածության զարգացումն ինչպես երեխաների ու մեծահասակների, այդպես էլ իրենց և հակառակ սեռի ներկայացուցիչների միջև: Սա ձեռք բերած գիտելիքների կամ փորձի հարստացման միջոց է: Կատարելով որևէ դեր՝ երեխան ձգտում է՝ ըստ համապատասխան իրավիճակի դրսևորել այն և հասցնել ավարտին: Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ընդունակությունները:

Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների հետ: Դերային խաղը երեխայի համար սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները: Դերախաղի էական նշանակությունը այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և կարծես աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, դերային խաղերի միջոցով: Երեխան հավատում է իր հորինած կերպարին: Նա ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Դերախաղը հիմնականում խմբային է, մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Դերային խաղն ունի ուսուցանող, դաստիարակող և պրակտիկ մեծ հնարավորություններ: Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է: Երբ երեխան գիտակցում է, որ գործում է ինքնուրույն, սկսվում է նրա կյանքի առաջին դերային խաղը: Դերային

խաղում զարգանում է կամածին վարքը: Երեխայի մոտ զարգանում է կամածին ուշադրություն և կամածին հիշողություն: Հիմնվելով ստացած տեղեկության վրա, նա փողարինող առարկան օժտում է այն հատկանիշներով, որոնք առավել շատ են նրան հետաքրքրում: Երեխաների համար դերային խաղերն ունեն ավանդական սյուժետ՝ խանութ, հիվանդանոց, դպրոց:

Նախադպրոցական կրթության մեջ դերային խաղերին պետք է շատ մեծ կարևորություն տալ, հատկապես իմանալով, որ երեխաները մեծ բավականություն են ստանում տարբեր տեսակի խաղերից:

Օրինակելի Պարապմունք

Տեսակը՝ Հեքիաթի վերապատմում, բեմականացում

Թեմա՝ Հովհաննես Թումանյանի << ՈՒլիկը>>

Նպատակը՝ Սովորեցնել ընկալել գեղարվեստական ստեղծագործության իմաստը: Հաջորդականությամբ և տրամաբանված վերապատմել և բեմականացնել հեքիաթը: Ակտիվացնել երեխաների բառապաշարը արոտ, սարեսար, արածում, մկկում բառերով:

Անհրաժեշտ պարագաներ՝ Սեղանային թատրոնի պերսոնաժներ՝ այծ, ուլիկ, գայլ, ընտանի կենդանիների նկարաշար:

Պարապմունքի ընթացքը՝ Դաստիարակը երեխաների համար կարդում է Հ. Թումանյանի << Ուլիկը>> հեքիաթը: Այնուհետև հարցնում է՝ դուր եկավ նրանց այդ հեքիաթը: Մեկ անգամ ևս ընթերցում է հեքիաթը և երեխաների ուշադրությունը հրավիրում այն բանի վրա, որը անհրաժեշտ է ուշադիր լսել որպեսզի պատմելիս ոչինչ բաց չփողնեն և չշփոթեն: Այնուհետև շարունակում է . << Ինչի՞ մասին է հեքիաթը: Ինչի՞ց պետք է սկսել պատմել այն: Ինչի՞ մասին է շարունակությունը: Ամեն անգամ տուն գալիս ի՞նչ էր մկկում այծն իր ուլին: Մի օր ի՞նչ պատահեց: >>

- Ինչպես վարվեց խելամիտ սեվուկ ուլիկը:

Դաստիարակը հնարավորություն է ընձեռում երեխաներին գնահատելու ուլիկի և գայլի արարքները: Ընթացքում ուղղորդում է երեխաների պատասխանները:

Առաջարկում է երեքից չորս երեխայի՝ ըստ ցանկության հեքիաթը պատմել հատվածներով, մառժամանակ օգնում է տեքստի ընթեցմանը զուգահեռ՝ սեղանային թատրոնի պերսոնաժներով բեմականացնել այն:

Ամեն անգամ դաստիարակը հիշեցնում է հեղինակի անունը, ազգանունը, ստեղծագործության անվանումը: Տեքստի վերապատման գնահատման ընթացքում ներգրավում է նաև երեխաներին, նկատելով դրականը և բացթողումները:

Նյութի ամփոփում՝

-Ի՞նչ սովորեցրեց մեզ հեքիաթը:

1. Դիտարկող – Տնօրեն – Պարապմունքը հագեցաշ էր անհրաժեշտ դիդակտիկ նյութերով, շատ զվարճալի էր և ուսուցանող:
2. Դիտարկող – Մեթոդիստ – Դաստիարակաը հասավ իր առջև դրվաշ նպատակին, պարապմունքին ներգրավված եին նաև պասիվ երեխաները:
3. Դիտարկող – Դաստիարակ – Երեխաները բավականին անկաշկանդ կարողանում էին կատարել իրենց դերերը:

Եզրակացություն

Կատարված հետազոտական աշխատանքի և պարապմունքի միջոցով, կարող եմ ասել,որ լուծել եմ իմ առջև դրված խնդիրները: Քանի որ երեխաները մասնակցում էին բավականին անկաշկանդ, սովորեցին նոր բառեր և ինչու չէ, բեմականացման միջոցով կառողացա ակտիվացնել պասիվ երեխաներին, քանի որ բեմականացումը անցկացնում էի խմբային տարբերակով, այսինքն մասնակցում էին սեղանի շուրջ նստած բոլոր երեխաները միաժամանակ: Այս տարբերակով հայտանբերեցի այնպիսի երեխաների, որոնք միշտ լուռ էին ու չէր արտահայտվում նրանց խոսքային և բեմական կարողությունները,սակայն նրանք տեսնելով բեմականացման համար հարմարեցված պերսոնաժները (խաղալիքները), շատ ոգևորվեցին և մեծ ուրախությամբ կատարեցին, հաղթահարեցին իրենց առջև դրված խնդիրները:

Խաղը լավագույն միջոցն է երեխային կրթելու և դաստիարակելու համար: Խաղի միջոցով կարելի է հասնել ցանակալի արդյունքի:

Օգտագործված գրականություն

1. Դպիր

2. Զ. Ռոդարի << Ստեղծագործական երևակայության քերականություն >>

3. «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում» Լ. Սմբատյան:

4. Մանկապարտեզի միջին խմբի ուսումնամեթոդական ձեռնարկ Հ. Միտոյան, Լ.Սմբատյան Լ. Սարգսյան